



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 192 71-5-10

Թիվ 17/ 01

„ 09 „ 01 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝

Ձեզ ենք նեկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի
ղեկավարի կողմից 2016թվականի դեկտեմբեր ամսվա ընդունված որոշումները,
կարգադրություն չի արձակվել:

Առդիր «3» թերթից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏՈՒԹՅԱՆ
Ամիս 01/ 112.11/96-17
10 01 2017



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 192 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» դեկտեմբերի 2016 թվականի N 60-Ա

ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՅԻ ԿԱՐԻՆԵ ԱՂԱՍՈՒ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԻՆՔՆԱԿԱՍ ՇԻՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով քաղաքացի Կարինե Աղասու Մկրտչյանի դիմումը Արմավիրի մարզի գ.Արմավիր 23 փողոց թիվ 39 հասցեում գտնվող տնամերձ հողամասի վրա կառուցված ինքնակամ շինությունների օրինականացման վերաբերյալ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ-ի 912-Ն որոշումը ինչպես նաև այն հանգամանքը, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի ներկայացնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ ինժինեռատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Ճանաչել օրինական քաղաքացի Կարինե Աղասու Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի գ.Արմավիր 23 փողոց թիվ 39 հասցեում գտնվող 576.3 քառ/մ. ինքնակամ շինությունները՝ որից 18.5 քառ/մ բնակելի տուն և 557.8 քառ/մ օժանդակ շինություններ:
2. Ինքնակամ շինությունները օրինական ճանաչելու համար վճար սահմանել՝ բնակելի տան համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով, իսկ օժանդակ շինությունների համար բազային տուրքի 6-ապատիկի չափով:
Հիմք ընդունելով 912 որոշման 13. Ա. և Բ. կետերը, ենթակա է վճարման 459.134 դրամ:
3. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում վճարը չմոծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝



Ռ.Ֆ.Մարգարյան

2016 թվականի դեկտեմբերի 26
գ.Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2016թ.

N 59-Ա

2017ԹՎԱԿԱՆԻ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավորվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006թվականի սեպտեմբերի 11-ի N 15-Ն հրամանի 11-րդ կետով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 2017թվականի ատեստավորման ենթակա համայնքային ծառայողի ցուցակը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝



Ռ.Ֆ.Մարգարյան

2016թվականի դեկտեմբերի 21

Գ. Արմավիր

Ց ՈՒ Ց Ա Կ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ
ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ

h/h	Ազգանուն,անուն հայրանուն	Համայնքային ծառայողի պաշտոնը	պաշտոնի ծածկագիրը
1.	Երիցյան Սերյոժա Արրահամի	2-րդ կարգի մասնագետ	3.3-1
2.	Քոչարյան Աննա Ռոբերտի	Առաջատար մասնագետ	3.1-3